ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

COVID-19-Ի ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԵՏԵՐԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ARMENIA TREE PROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

BUAN

ISSD

ESAC
"Environmental Sustainability Assistance Center" NGO

Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանում ՔՈՎԻԴ-19 համավարակն ունեցել է լուրջ տնտեսական և սոցիալական հետևանքներ: Չնայած համավարակի երկարաժամկետ բացասական ազդեցությունը դեռ պետք է գնահատվի, ակնհայտ է, որ 2030 թ.-ի Կայուն զարգացման նպատակների ճանապարհին առկա խոչընդոտներն արդեն աճում են:

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագրի պատվիրատուն Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունն է: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ գործընկեր նախարարությունների հետ համատեղ: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) ծրագրի քաղաքական գործընկերն ու պատասխանատուն է: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մարզային և համայնքային մակարդակներում ծրագիրն համակարգող հիմնական գործընկերն է:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է Գեղարքունիքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ ՇՄՆ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ:



Ծրագիրն աջակցում է ՀՀ Կառավարության 15-րդ միջոցառմանը՝ ուղղված ՀՀ Գեղարքունիքի մարզում ՔՈՎԻԴ-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացմանը՝ տրամադրելով ժամանակավոր աշխատանք և եկամուտ այն մարդկանց, ովքեր տուժել են համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից՝ միաժամանակ լուծելով բնապահպանական խնդիրներ:

Ծրագրի շրջանակներում Սևանա լիճ թափվող մի շարք գետափնյա տարածքներում մարզի բնակիչները տնկում են ուռենու կտրոններ և թափոններից մաքրում գետերի հուներն ու գետամերձ տարածքները:

Ծրագրին աջակցող տեղական գործընկերներն են **«Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն»** ՀԿ-ն, **«Էյ Թի Փի»** բարեգործական հիմնադրամը, **«Այ Էս Էս Դի»** Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» **(ISSD)** ՀԿ-ն, **«Բլեջան»** բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն հասարակական կազմակերպությունները:

Ափամերձ տարածքներում տնկատարածքների ընտրություն

Ուռենիների կտրոնների տնկման համար գետամերձ տարածքներն ընտրվել են հետևյալ չափանիշներով.

- էրոզացված, թեք և զառիթափ գետափնյա տարածքներ, որտեղ հողի վերականգնման և ամրացման աշխատանքներն առավել անհրաժեշտ են,
- ափամերձ տարածքներ, որոնք պիտանի չեն գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար,
- բավարար բնական խոնավություն և ջրահեռացում ունեցող տարածքներ՝ կտրոնների հաջող արմատակալումն ու աճն ապահովելու համար,
- տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունն ու համայնքների պատրաստակամությունը տնկված տարածքները պահպանելու հարցում:

Թիրախային խմբեր

Գեղարքունիքի մարզում ՔՈՎԻԴ-19 համավարակից առավել տուժել են սեզոնային արտագնա աշխատողները, ցածր եկամուտ ունեցողներն ու գործազուրկները, ոչ ֆորմալ աշխատանք ունեցող անձինք և սոցիալ-տնտեսապես խոցելի այլ խմբերը, նվազող եկամուտով գյուղատնտեսական արտադրողները և գործազրկության մեջ հայտնված հանգստի, սննդի և զբոսաշրջության ոլորտի աշխատողները: Ծրագիրը ստեղծել է հավասար հնարավորություններ բոլոր չափահաս բնակիչների մասնակցության համար:

Գարնանը համայնքներից
249 մասնակից
Սևանա լիճ թափվող
Մասրիկ, Արգիճի,
Գավառագետ և Կարճաղբյուր
գետերի ափամերձ
տարածքներում տնկել է
520.000
ուռենու կտրոն:

2021 թ.-ի աշնանը
կտնկվի ևս
480,000 կտրոն:

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ծրագիրն աջակցում է ՀՀ կառավարության՝ Սևանա լճի պահպանության բարելավման նախաձեռնությանը, որին օժանդակում է նաև **EU4Sevan** ծրագիրը:

Ծրագիրը նպաստում է «կանաչ» վերականգնմանը և իրականացվում է Հայաստանում էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված **«10.000.000 ծառ»** նախագծի շրջանակներում:

Ծրագրի իրականացումը 2021 թ. գարնանն ու ամռանը

Ապրիլ-հունիս ամիսներին Գեղարքունիքի մարզի 10 համայնքից (Ծակքար, Լիճք, Արծվանիստ, Լուսակունք, Խաչաղբյուր, Կարճաղբյուր, Մարտունի, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ և Վարդենիկ) 253 հոգի մասնակցել է նշված համայնքների վարչական տարածքներով Սևանա լիճ հոսող գետերի հուների և ափերի մաքրման աշխատանքներին: Ընդհանուր առմամբ հեռացվել է 229,4 տ աղբ, իսկ 283 կգ վերամշակման ենթակա թափոն հավաքվել և տեղափոխվել է վերամշակման գործարաններ: Աշխատանքների մեկնարկին բոլոր ներգրավվածները մասնակցել են թափոնների հավաքման, վերամշակման, տեսակավորման, անվտանգության և այլ համապատասխան թեմաներով դասընթացների: Բացի այդ, ավելի քան 100 ակտիվ բնակիչ և որոշումներ կայացնող անձինք մասնակցել են թափոնը ռեսուրս կամ եկամտի աղբյուր դարձնելու վերաբերյալ լրացուցիչ գործնական դասընթացների: Հավաքված՝ վերամշակման ենթակա թափոններից նրանք պատրաստել են ձեռագործ պարագաներ և երկրորդական օգտագործման այլ օգտակար իրեր, որոնք ցուցադրվել են Արծվանիստ գետի մոտ կազմակերպված միջոցառման ժամանակ:

Ընդհանուր առմամբ,
2021 թ.-ի գարնան և ամռան ամիսներին մաքրման և տնկման աշխատանքներին ներգրավվել է
502 հոգի
Գեղարքունիքի մարզի
18 համայնքից, որոնցից
61%-ը եղել են **կանայք:**

Ակնկալվող արդյունքներ

- Կարճաժամկետ աշխատանք առնվազն **750 հոգու** համար, ովքեր ամբողջությամբ կամ մասամբ կորցրել են իրենց եկամուտը համավարակի հետևանքով:
- Հայաստանում գետավազանների էկոլոգիական վերականգնման նպատակով Գեղարքունիքի մարզի գետերի ափամերձ տարածքներում մինչև **1.000.000** ուռենու կտրոնի տունկ:
- Առնվազն **500 հոգու** մասնակցություն բնապահպանական կրթության դասընթացների և միջոցառումների:
- Մեթոդաբանության, ծրագրի ընթացքի և արդյունքների գնահատում և ծրագրի հետագա աշխատանքների համար առաջարկությունների մշակում:

Տնկման աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության 2020 թ-ի մայիսի 14-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնհինգերորդ միջոցառմամբ սահմանված աշխատանքների կազմակերպման և իրականացման ու շահառուներին գումարի տրամադրման կարգը հաստատելու մասին» N749-Լ որոշման համաձայն:

Ծրագրի դրական ազդեցությունը

Կենցաղային աղբի հեռացումը գետերից և ստվեր ձևավորող, լավ արմատակալած ծառերի առկայությունը կնպաստի գետերի ու Սևանա լճի էկոհամակարգի առողջացմանը: Ծրագրի երկարաժամկետ դրական էկոլոգիական ազդեցությունը ներառում է գետափնյա տարածքների վերականգնում, գետերի և վտակների ջրի ջերմաստիճանի և գոլորշիացման նվազում, որը կարող է նաև բարելավել ձկների ձվադրման բնական միջավայրը, և նվազեցնել վարարման հետևանքները: Ակնկալվում է դրական ազդեցություն կենսաբազմազանության, լանջերի պաշտպանության և ջրի որակի վրա: Ժամանակի ընթացքում ուռենիների աճող ճյուղերը կարող են ծառայել որպես հումք կենսավառելիքի՝ բրիկետների ստացման համար:

Ծրագրի ռիսկերից են կտրոնների վնասումը վաղ ցրտահարությունից և աճող տնկիների վնասումը ընտանի կենդանիների արածեցումից: Չի բացառվում, որ մաքրված տարածքները կարող են նորից աղտոտվել: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ այդ ռիսկը կնվազի բնակչության իրազեկության զգալի բարձրացման և ծրագրի տեսանելի օգուտների շնորհիվ:

Արդյունքների կայունություն

Գեղարքունիքի մարզում համայնքների կողմից լայնածավալ աշխատանքների սկզբնական արդյունքների պահպանման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր: Անհրաժեշտ են նպատակային հետևողական աշխատանքներ Գեղարքունիքի մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ վերականգնվող ափամերձ շերտերի պահպանության ապահովման և շրջակա միջավայրի պահպանության կարևորության մասին ներգրավված համայնքների իրազեկության բարձրացման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ARMENIA TREE PROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

BUAN

ISSD

ESAC
"Environmental Sustainability Assistance Center" NGO